## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
## № ԲՄԱՊՁԲ-20-7/6-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 22 .04. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՍՄՕԳՍՈՅՈՒԶ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Մկրտչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2020թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-20-7/6-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

### 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **198 304 884 (մեկ հարյուր իննսունութ միլիոն երեք հարյուր չորս հազար ութ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անքաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անքաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

**ԳՆՈՐԴ**
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՍՄՕԳՍՈՅՈՒԶ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Է. Քոչար փ., 15շ, բն 7
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150020698768795
ՀՎՀՀ 02668124
տնօրեն
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Լ. ա. Կ. Մկրտչյան
անձն. AS 0237405

**Հավելված N 1**
№ ԲՄԱՊՁԲ-20-7/6-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2020թ., | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր |
| 1 | կարագ /Կարագ/ | կգ | 16914 | 2791 | 47206974 | 10000 | 6914 | | | | | |
| 2 | կարագ /Կարագ/ | կգ | 16914 | 2791 | 47206974 | 10000 | 6914 | | | | | |
| 3 | կարագ /Կարագ անհատական փաթեթավորմամբ/ | կգ | 31236 | 3326 | 103890936 | | 5000 | 5000 | 5000 | 5000 | 5000 | 6236 |

**Հավելված N 2**
№ ԲՄԱՊՁԲ-20-7/6-2 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | կարագ /Կարագ/ | 15531100/501 | 27910000 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 |
| 2 | կարագ /Կարագ/ | 15531100/502 | 27910000 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 | 47206974 |
| 3 | կարագ /Կարագ անհատական փաթեթավորմամբ/ | 15531100/505 | | 16630000 | 33260000 | 49890000 | 66520000 | 83150000 | 103890936 | 103890936 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՍՄՕԳՍՈՅՈՒՁ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ